ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի ՀԵՐԹԱԿԱՆ (ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ) ՆԻՍՏԻ

ք. Երևան 5 փետրվար 2020թ.

2020 թվականի փետրվարի 4-ին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ Կառավարման խորհուրդ) նախագահի 2019 թվականի հունվարի 31-ի թիվ 1–Լ որոշման, տեղի ունեցավ Կառավարման խորհրդի արտահերթ նիստ (հեռակա), որի ընթացքում որոշվեց նիստի օրակարգում ընդգրկված միակ հարցի վերաբերյալ որոշումն ընդունել հեռակա քվեարկությամբ:

Կառավարման խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2020 թվականի փետրվարի 3-ին և ավարտվեց 2020 թվականի փետրվարի 4-ին:

Քվեարկությանը մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ֆելիքս Ցոլակյան ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ս.Պապիկյան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Ա. Ասոյան ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ռ.Գրիգորյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա.Ավանեսյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Վ. Վերմիշյան ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Ս. Թովմասյան ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար

Ա. Դանիելյան Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Ա. Պետրոսյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ տնօրեն (համաձայնությամբ)
Ա. Կարապետյան	«Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
Ս. Թովմասյան	«Ճարտարապետության և շինարարության ՀՀ ազգային համալսարան» հիմնադրամի ճարտարապետության ֆակուլտետի դեկան (համաձայնությամբ)

Կառավարման խորհրդի հեռակա քվեարկությանը չի մասնակցել Կառավարման խորհրդի անդամ՝ Կ. Բրուտյանը - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ

1. Հավանություն տալ Տեսչական մարմնի 2019 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվությանը:

Քվեարկության համապատասխան նյութերը ուղարկվեցին Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Քվեարկությունը համարվեց կայացած:

Քվեարկության արդյունքում՝

1. Ֆելիքս Ցոլակյանը քվեարկեց կողմ,
2. Ս.Պապիկյանը քվեարկեց կողմ,
3. Ա. Ասոյանը քվեարկեց կողմ,
4. Ռ. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
5. Ա.Ավանեսյանը քվեարկեց կողմ,
6. Վ. Վերմիշյանը քվեարկեց կողմ,
7. Ս. Թովմասյանը քվեարկեց կողմ,

8. Ա Դանիելյանը քվեարկեց կողմ,
9. Ա. Պետրոսյանը քվեարկեց կողմ,
10. Ա. Կարապետյանը քվեարկեց կողմ,
11. Սարգիս Թովմասյանը քվարկեց կողմ:

Քվեարկության արդյունքները՝
Հարց 1-ին՝ 11 կողմ, 0 դեմ:

Կառավարման խորհրդի անդամներ Արթուր Ասոյանը և Սարգիս Թովմասյանը ներկայացրեցին դիտարկումներ, առաջարկություններ, որոնք կցվում են սույն արձանագրությանը:

Կառավարման խորհրդի անդամներ Արթուր Ասոյանի և Սարգիս Թովմասյանի առաջարկությունների և դիտարկումների հիման վրա Տեսչական մարմնի 2019 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվության մեջ կատարվել են լրացումներ և մասնակի փոփոխություններ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության Տեսչական մարմնի 2019 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվությանը:

Կառավարման խորհրդի նախագահ՝

_____ **Ֆ. Ցոլակյան**
ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Ն.Մկրտչյան**
ստորագրություն